

Կազմված է «\_\_\_» \_\_\_\_\_ 2015թ.

Տպագրված է ընդամենը 2 օրինակից

Օրինակ-----

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«Ալյանս» առաջադիմական

ցենտրիստական կուսակցության

Հիմնադիր համագումարի որոշմամբ

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ Իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի կենտրոնական

մարմնի կողմից

«16» մայիսի 2015թ.

«-----»-----201 թ.

Կուսակցության նախագահ՝

Գրանցման թիվ-----

Տ.Ուրիխանյան

Վկայականի համար-----

Հարկ վճարողի հաշվառման

համարը \_\_\_\_\_

Պետական ռեգիստրի գործակալության պետ՝

Կ. Ադամյան

-----

# «ԱԼՅԱՆՍ»

ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

**ԾՐԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2015թ.

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության զարգացման գործում մասնակցություն ունենալու, բնակչության համար արժանավայել կենսակերպ ապահովելու և պետության զարգացմանն ու ամրապնդմանը նպաստելու նպատակով:

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության անդամները միավորվում են ազնվության, արդարության, համերաշխության, մարդասիրության ու հայրենասիրության գաղափարների շուրջ:

Երկրում առկա խնդիրների լուծումը «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը հնարավոր է համարում միևնույն բարոյական բարձր արժեքներ կրող, հանրային շահի կարևորությունը գիտակցող, հասարակության վստահությունը վայելող, ազնիվ անհատների և քաղաքական ուժերի համախմբման ու համագործակցության պարագայում:

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը առաջնային է համարում երկրում ժողովրդավարական կարգերի ամրապնդումը, քաղաքացիական հասարակության զարգացումը, մարդու իրավունքների, ազատությունների պաշտպանությունն ու օրենքի և իրավունքի հավասարակշռված գերակայությունը:

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը ցենտրիստական քաղաքական ուժ է, որի քաղաքական պլատֆորմը հիմնված է պետական կառավարմանը և տնտեսական կարգերին վերաբերող սոցիալիստական և լիբերալ համակարգերի առավել արդարացված և արդյունավետ կիրառվող առանձին դրույթների համադրության վրա: Կուսակցությունն ընդունում է ազատական հիմքերով համակարգի գոյության անհրաժեշտությունը, սակայն քաղաքացիների սոցիալական ապահովության և սոցիալական արդարության անվերապահ գերակայության ու պետության կարգավորիչ դերակատարմամբ համակարգվող տնտեսության պայմաններում:

Որպես ցենտրիստական կուսակցություն «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը իր ողջ գործունեությամբ նպաստելու է երկրում ուժեղ միջին խավի ստեղծմանը, փոքր բիզնեսի, ձեռնարկությունների, ֆերմերային ագրոտնտեսությունների ու շրջակա միջավայրի պաշտպանությանը՝ որպես առաջնային գրավական Հայաստանի Հանրապետությունում իրական ժողովրդավարության ու բնակչության կենսամակարդակի բարձրացման:

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության համար ազատական, ժողովրդավարական արժեքները ընդունելի են ազգային և ավանդական արժեհամակարգի պահպանության շրջանակներում:

## **1. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության հիմնական նպատակներից է Հայաստանի Հանրապետության, որպես իրավական պետության զարգացմանը նպաստելը, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովմանն օժանդակելն ու ժողովրդավարական ինստիտուտների կայացման գործում ակտիվ մասնակցելը:

### ***Քաղաքական ոլորտ***

- Նպաստել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրական տարանջատման և հավասարակշռման սկզբունքների իրագործմանը,
- օժանդակել քաղաքացիական համաձայնության վրա հիմնված հասարակական-քաղաքական օրինաչափ հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը,

- նպաստել Ազգային ժողովի ընտրություններում համամասնական ընտրակարգի չափի ավելացմանը՝ ի հաշիվ մեծամասնականի,
- նպաստել ընտրական հանձնաժողովների գործունեության թափանցիկության և դրանցում ներկայացված քաղաքական ուժերի պատասխանատվության մակարդակների բարձրացմանը,
- նպաստել հասարակական կազմակերպությունների գործունեության ազատության պահպանմանը,
- կարևորելով ժողովրդավարության զարգացման գործընթացում զանգվածային լրատվամիջոցների՝ որպես բազմակարծության արտահայտման և հասարակական կարծիքի ձևավորման կարևորագույն գործիքի դերը, բարելավել նրանց ազատ և անաչառ գործունեության պայմանները,
- օժանդակել քաղաքացիների խաղաղ, առանց զենքի ժողովներ, հավաքներ, երթեր անցկացնելու սահմանադրական իրավունքի իրականացմանը:

### ***Պետական կառավարում***

Պետական վարչարարության բարեփոխման և կատարելագործման նպատակով «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

1. բացառել նախարարությունների, գերատեսչությունների և պետական կառավարման այլ մարմինների կողմից միանման գործառույթների իրականացումը,
2. ընդունել վարչական կանոնակարգ՝ սահմանելով ու հստակեցնելով որոշումներ ընդունելու կարգը և ժամկետները, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության և վարչարարության կանոնների խախտման համար պատասխանատվությունը,
3. բարձրացնել պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության մակարդակը՝ արմատավորելով հասարակական վերահսկողության միջազգային փորձը,
4. հնարավորինս կրճատել պետական պաշտոնյաների և ծառայողների թվաքանակը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը և կատարելագործել պետական ծառայողների վարձատրության համակարգը:
5. առաջիկա տարիների համար պետական կառավարման համակարգում ներդնել արտակարգ տնտեսման ռեժիմ:

### ***Կոռուպցիայի դեմ պայքար***

Կոռուպցիայի հաղթահարման համար նպատակահարմար ենք համարում՝

- բարձրացնել պետական վարչարարության արդյունավետությունը,
- վերացնել պաշտոնատար անձանց և պետական ծառայողների կողմից կամայական որոշումներ ընդունելու հնարավորությունները, հասնել նրան, որ այդ անձինք կատարեն միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով,
- իրականացնել օրենքների և իրավական ակտերի համալիր փորձաքննություն՝ դրանց «կաշառատարության» իմաստով, հանել այդպիսի դրույթները և վերացնել օրենսդրությունում առկա հակասությունները և երկիմաստությունները,
- կոռուպցիայի փաստերի հայտնաբերման դեպքում համապատասխան պաշտոնատար անձանց ենթարկել օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության՝ անկախ նրանց զբաղեցրած դիրքից և պաշտոնից,

- կատարելագործել և խստացնել գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման մեխանիզմը,
- հետևողական և համալիր պայքար մղել կոռուպցիայի հետ սերտաճած այնպիսի հանցավոր երևույթների դեմ, ինչպիսիք են՝ դրամանենգությունը, ստվերային գործունեությունը, կաշառակերությունը,
- դատական բարեփոխումների շնորհիվ պարզեցնել պաշտոնատար անձանց և պետական ծառայողների գործողությունների դատական բողոքարկման ընթացակարգը,
- մշակել և ընդունել հակակոռուպցիոն օրենսդրական փաթեթ,
- խիստ աշխատակարգային պայմաններ սահմանելով հանդերձ՝ բարձրացնել պետական ծառայողների աշխատավարձը

### ***Անկախ դատական համակարգի ձևավորում***

Առանց անկախ, հասարակության հարգանքը վայելող և արդյունավետ դատական համակարգի գոյության հնարավոր չէ կառուցել իրավական պետություն, ձևավորել ժողովրդավարական ամուր հասարակություն և լուծել սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներ:

Հայաստանի Հանրապետության դատական համակարգի գործունեությունը պետք է հիմնված լինի արդարադատության հրապարակայնության և թափանցիկության ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության և ողջամիտ ժամկետում գործի արդարացի ու հրապարակային դատական քննության սկզբունքների վրա:

Դատավորի կարգավիճակի հստակեցման, նրա անկախության և անկողմնակալության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է ստեղծել դատավորի անձեռնմխելիության ու անփոփոխելիության իրավական, սոցիալական և անհրաժեշտ այլ հիմքեր՝ դրանք հավասարակշռելով պատասխանատվության ապահովման գործուն մեխանիզմներով:

### ***Տեղեկատվական միջավայրի զարգացում***

Տեղեկատվական միջավայրի զարգացման ուղղությամբ ժամանակակից իրականության պահանջներին համահունչ անհրաժեշտ է՝

- տեղեկատվական միջավայրի զարգացման պայմաններում պետական համալիր ծրագրերի մշակումը, որոնք ուղղված կլինեն գիտելիքի գերակայության վրա հիմնված պետական ու հասարակական կառավարման բարելավմանը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հանրապետության ներուժի բազմապատկումը և դրա արդյունավետ օգտագործումը,
- գիտակրթական և մասնագիտական կարողությունների առավել ամբողջական օգտագործմանն ուղղված ծրագրերի իրականացումը,
- տեղեկատվական համաշխարհային ցանցերին ինտեգրումը և այդ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը,
- տեղեկատվական հասարակության բարիքների մատչելիության մակարդակի բարձրացումը և տեղեկատվական ցանցերից օգտվողների շրջանակի շարունակական ընդլայնումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար ներդրումային, կազմակերպական և ինստիտուցիոնալ բարենպաստ միջավայրի ձևավորումը:

## 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը նախատեսում է իրականացնել քաղաքացիական հասարակության աջակցության և պաշտպանության քաղաքականություն: Կուսակցությունը համոզված է, որ ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված՝ քաղաքացիների ինքնակազմակերպման ձևերում է կուտակված հասարակության զարգացման հսկայական ներուժը: Պետությունը պետք է առավելագույնս օգտագործի այդ ներուժը՝ ապահովելով ստեղծագործական և մշակութային միությունների, հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև սեփականատերերի, սպառողների, գործատուների, աշխատողների, ազգային, կրոնական և այլ միավորումների գործունեությունը:

### ***Տեղական ինքնակառավարման զարգացում***

Հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարումը քաղաքացիական հասարակության հիմքերից է, որպես նպատակ դիտարկելով Հայաստանում տնտեսապես ուժեղ տեղական ինքնակառավարման կայացումը, «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

- օրենսդրորեն ամրապնդել տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքները, հստակեցնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և իրավասությունները,
- բարձրացնել տեղական ընտրությունների նշանակությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ապահովել ժողովրդավարական ներկայացուցչություն,
- ընդլայնել համայնքների բյուջետային եկամուտների մեծացման հնարավորությունները և համայնքների ներդաշնակ զարգացման նպատակով ներդնել ֆինանսական համահարթեցման սկզբունքորեն նոր մեխանիզմներ,
- վերանայել գույքահարկի ու հողի հարկի հաշվարկման և գանձման մեխանիզմները՝ ապահովելով այդ հարկատեսակների մուտքերի զգալի ավելացում,
- ուժեղացնել և կատարելագործել պետության և բնակչության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վարչական, ֆինանսական և հասարակական վերահսկողությունը:

### ***Աջակցություն հասարակական կազմակերպություններին***

Հասարակական կազմակերպությունների զարգացումը կարևորում ենք հետևյալ խնդիրների լուծման համատեքստում՝

- մարդկային գործոնի էական ուժեղացումը, իշխանության ու հասարակության միջև երկխոսության և տարաբնույթ հարցերի վերաբերյալ հասարակական համաձայնության ձեռքբերման հնարավորությունների մեծացումը,
- բարեփոխումների, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման գործընթացներին քաղաքացիների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը և այդ առումով մասնակցային գործընթացի խթանումը,
- պետական որոշումների մշակման, քննարկման և կատարման վերահսկողության գործընթացներում հասարակական կազմակերպությունների մասնակցության հնարավորությունների, մասնագիտացված հասարակական կազմակերպությունների ներգրավումը սոցիալական և տնտեսական ծրագրերի մշակման գործընթացներին,
- պետական բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացմանը հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցության ապահովումը:

### 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ճգնաժամի պայմաններում «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը անհրաժեշտ է համարում կոշտ հակամենաշնորհային միջոցների ձեռնարկումը, դրամական միջոցների և նյութական բարիքների արդար շրջանառության համար իրական նպաստավոր պայմանների ստեղծումը, տնտեսության իրական սեկտորների (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, փոքր ու միջին ձեռնարկատիրություն և այլն) զարգացման խթանումը: Կարևոր է արագ գործնական ինտեգրումը Եվրասիական տնտեսական միության կառուցվածքային համակարգին, օրենսդրական դաշտի մոտարկումն ու Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարության մշակումը ԵՏՄ անդամակցության պայմաններում: Անհրաժեշտ ենք համարում հրատապ հարկային բեռի թեթևացումը ձեռնարկատիրական առավել խոցելի խմբերի ու ոլորտների համար, ընտանեկան բիզնեսի համար մինչև որոշակի շրջանառության շեմը ընդհանրապես հարկերից ազատումը, ինչպես նաև ժամանակավորապես արտակարգ ճգնաժամային տնտեսական կառավարման ռեժիմին անցումը:

Անհրաժեշտ են նաև՝

- տնտեսական այնպիսի աճի ապահովումը, որը թույլ կտա տնտեսավարման գործընթացում հնարավորինս մեծացնել բնակչության ընդգրկվածությունը և զբաղվածությունը,
- կառուցվածքային վերափոխումների գործընթացի արագացումը և արտադրողականության ու մրցունակության հենքի վրա արտադրական հարաբերությունների ձևավորումը,
- հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կայունության, համակարգվածության և թափանցիկության ապահովումը,
- գործարարության (հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրության) զարգացման նպատակով ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը և երկրի ներդրումային գրավչության մակարդակի բարձրացումը,
- ստվերային տնտեսության ծավալի նվազեցումը,
- մրցակցային առողջ միջավայրի ձևավորումն ու սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրական մեխանիզմների ներդրումը:
- մրցակցային շուկաների ձևավորման ու զարգացման սահմանափակումների, խոչընդոտների և արգելքների վերացումը, որն էլ իրական հիմք կդառնա գործարար ակտիվության և ժամանակակից ենթակառուցվածքների վրա հիմնված շուկայական մոդելի ձևավորման համար,
- շուկայական ենթակառուցվածքների (բանկային և ապահովագրական համակարգեր, հաղորդակցության ուղիներ, բորսայական առևտուր և այլն) զարգացումը,
- ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության զարգացումը, բնական մենաշնորհի ոլորտներում ոչ մենաշնորհային հատվածների տարանջատումը, բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության սակագնային կարգավորումը և նրանց ծախսերի նկատմամբ վերահսկողության կատարելագործումը:  
Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը պետք է իրականացվի տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման, ներդրումային գրավչության ստեղծման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով: Այս համատեքստում անհրաժեշտ է՝
- ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և իրավապայմանագրային դաշտի կայացումն ու կատարելագործում,
- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության իրական ապահովում,

- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար պայմանների ապահովում,
- մեծածավալ ներդրումների համար, ինչպես նաև տնտեսության զարգացման համար որոշիչ, գերակա համարվող ոլորտներում և ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում խստորեն վերահսկելի արտոնությունների տրամադրում,
- նպաստել արտերկրից կատարվող կապիտալ ներդրումների ավելացմանը և այդ նպատակով գործող 300 մլն. դրամի նվազագույն կապիտալի սանդղակը նվազեցնել մի քանի անգամ,
- ներդրումային ծրագրերի մշակման և իրականացման հարցում պետական աջակցություն,
- ներդրումները խթանող ենթակառուցվածքների կայացումը և զարգացում,
- պետական ներդրումային համալիր ծրագրերի իրականացում,
- մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն:

Կուսակցությունը համարում է, որ երկրի հարկային համակարգը պետք է սերտորեն կապված լինի տնտեսության կառուցվածքի և տվյալ ժամանակաշրջանում ձևավորված տնտեսական իրական համամասնությունների հետ՝ արտացոլելով ոչ միայն պետության և բնակչության, այլև գործարար շրջանակների կենսական շահերը: Հարկային և ընդհանրապես ֆինանսական փոխհարաբերություններում պետությունը և հարկատուները պետք է կրեն հավասարակշռված պատասխանատվություն:

Վերոգրյալի առումով կարևորում ենք՝

- պետության և տնտեսավարող սուբյեկտների շահերի ներդաշնակեցումը և նրանց միջև հակասությունների մեղմումը,
- տնտեսական աճի ապահովմանը, մասնավորապես՝ ներդրումային ակտիվության բարձրացմանը նպաստող հարկային համակարգի ձևավորումը,
- տնտեսության իրական հատվածի զարգացման հնարավորությունների, և դրանով պայմանավորված՝ հարկման բազայի ընդլայնումը,
- հարկային օրենսդրության կատարելագործումը, հարկային օրենսգրքի մշակումն ու ընդունումը:

Տնտեսական վերափոխումների ներկա փուլում որպես հարկային քաղաքականության կատարելագործման գերակա խնդիրներ պետք է համարել ձեռնարկատիրական ակտիվության ուղղությամբ հարկային մեխանիզմի կարգավորիչ և խթանիչ լծակների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև հարկային բեռի բաշխման արդարացիության և հիմնավորվածության ապահովումը: Այս հիմքով ձևավորված հարկային համակարգը պետք է ապահովի ստվերային տնտեսության նվազագույն և հարկերի հավաքելիության բարձր աստիճան, հարկման բեռի հավասարաչափ բաշխում, հարկերի օպտիմալ դրույքաչափեր և արդյունավետ հարկային վարչարարություն, ինչի համար անհրաժեշտ է՝

- հարկային վարչարարության արդյունավետության և հարկային մարմիններում ընդգրկված աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացումը,
- օրենսդրության պահանջների պատշաճ կատարման, հարկային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովումը,
- հայրենական արտադրության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար հարկային դաշտի բարենպաստության մակարդակի բարձրացումը,
- օրենսդրական դաշտի պարզեցումը և օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների կիրառումը,

- հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովումը:

### ***Բյուջետային քաղաքականություն***

«Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը, արդյունավետ բյուջետային համակարգի ձևավորման նպատակով, առաջնահերթ կարգով անհրաժեշտ է համարում լուծել հետևյալ խնդիրները՝

- բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում իրականացվող ծախսերի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,
- բյուջետային համակարգի կայունության մակարդակի բարձրացումը, արտաքին տնտեսական իրավիճակից դրա կախվածության աստիճանի նվազեցումը,
- բյուջետային քաղաքականության, որպես պետական կապիտալ ներդրումների ընդլայնումը խթանող կարևոր գործիքի, դերի բարձրացումը,
- բյուջետային գործընթացի կատարելագործումը, դրա արդյունավետության մակարդակի բարձրացումը և բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում սահմանված ծրագրերի, ստանձնած պարտավորությունների ու դրանց իրականացման համար նախատեսվող ծախսերի համարժեքության ապահովումը,
- պետական վարչարարական ապարատի պահպանման ծախսերի հիմնավորվածության ապահովումը և կրճատումը
- պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքում ներքին աղբյուրների տեսակարար կշռի մեծացումը:

Պետության կարևոր խնդիրներից մեկը սեփական վճարունակության ապահովումն է, որի համար անհրաժեշտ է պետության պարտավորությունները համապատասխանեցնել նրա կողմից սնօրինվող ռեսուրսների հետ, և հաշվի առնելով արտաքին պարտավորությունների բարձր մակարդակը, ձգտել բյուջետային դեֆիցիտի կրճատմանը: Այս նպատակով անհրաժեշտ է «գույքագրել» պետության բոլոր պարտավորությունները, անհրաժեշտության դեպքում վերակառուցել ներքին պարտավորությունները և վերացնել չհիմնավորված բյուջետային ծախսերը:

### ***Դրամավարկային քաղաքականություն***

Դրամավարկային ոլորտում վերջին տարիներին ստեղծված անբարենպաստ վիճակի առկայության պարագայում չափազանց կարևոր է խիստ հսկողությունը բանկային ոլորտի նկատմամբ, արտարժույթի փոխարժեքի կտրուկ փոփոխությունների, գնաճի մեծ տեմպերի, արտահանման ծավալների անկման և արտասահմանյան տրանսֆերտների նվազման պայմաններում անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել ընթացիկ բանկային վարկավորման համակարգը, նվազեցնել արտարժույթային վարկերի տոկոսադրույքները, որոշ խավերի նկատմամբ կիրառել մասնակի վարկային ամնիստիա և ակտիվորեն կիրառել ֆինանսական էմիսիայի մեխանիզմներ:

Ֆինանսական և վարկային շուկաների կարգավորման նպատակով պետք է իրականացնել՝

- գների կայունության ապահովում,
- ազգային դրամի նկատմամբ վստահության աճի ապահովում,
- գնաճի հիմնավորված մակարդակի սահմանում և դրա կառավարելիության աստիճանի բարձրացում,
- ազգային դրամի կայունության, դրամական զանգվածի և տնտեսության հնարավորությունների համապատասխանության ապահովում,



- տնտեսության զարգացմանը նպաստող արդյունավետ ֆինանսավարկային քաղաքականության մշակումը և իրականացում,
- ոչ կանխիկ դրամաշրջանառության ծավալների ընդլայնումը և դրամի փոխարկելիության ապահովում,
- բանկային համակարգի նկատմամբ վստահության լիարժեք վերականգնումը և համակարգի կողմից խնայողությունների ներգրավման գործընթացի խթանում,
- վարկային դրույքաչափերի նվազեցումը, երկարաժամկետ վարկերի ծավալների մեծացումը և վարկային ռեսուրսների մատչելիության ապահովում,
- գնաճի նպատակադրման ռեժիմում գնաճի կառավարման ճկունության ապահովում,
- վճարահաշվարկային հարաբերությունների բարելավում,
- կապիտալի շուկայի ձևավորում:

***Հակամենաշնորհային քաղաքականություն և տնտեսական մրցակցություն***

Հայաստանի տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը ներկայումս հանդիսանում է մրցակցային դաշտի թույլ պաշտպանությունը և տարբեր հատկանիշներով տնտեսության ճյուղերի ու ոլորտների մենաշնորհացման բարձր մակարդակը: Թեև այս բնագավառում արդեն իսկ ընդունվել են մի շարք օրենքներ, ստեղծվել է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմին և այլն, սակայն տնտեսավարող սուբյեկտների մրցակցային իրավունքների պաշտպանության բնագավառում ձևավորված իրավիճակը դեռևս մնում է խիստ անմխիթար:

Այս նպատակով Կուսակցությունը առաջարկում է իրականացնել ակտիվ հակամենաշնորհային քաղաքականություն՝ լուծելով հետևյալ խնդիրները.

- Էականորեն բարձրացնել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերը և գործառության անկախությունը, նրան օժտել մրցակցության պաշտպանության և ակտիվ հակամենաշնորհային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ բոլոր լիազորություններով, ապահովել պետական մյուս մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկատվության փոխանակման և համագործակցության մեխանիզմների անխափան գործողությունը:
- Հստակեցնել և տարանջատել մենաշնորհային և գերիշխող դիրք զբաղեցնող սուբյեկտների գրանցամատյանները, օրենքով սահմանել «մենաշնորհ» ու «գերիշխող դիրք» կարգավիճակների որոշման չափանիշները և դրանց նկատմամբ վարել իրենց կարգավիճակին համարժեք, տարբերակված և հիմնավորված հակամենաշնորհային քաղաքականություն:
- Ապրանքային նույն շուկաներում պարբերաբար իրականացնել մրցակցային դաշտի ուսումնասիրություններ և վերլուծություններ:
- Օպերատիվ կերպով վերացնել հանրապետության ներսում կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի խոչընդոտները և նպաստել այս բնագավառում տրանսակցիոն ծախսերի նվազեցմանը:
- Հստակեցնել և հնարավորինս պարզեցնել տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով կիրառվող ընթացակարգերն ու մեխանիզմները:
- Կարգավորման հատուկ մեխանիզմներ սահմանել փոքր ու միջին ձեռնարկությունների շահերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև վերանայել գովազդային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունը՝ բացառելով թաքնված գովազդի կիրառման և համապատասխան սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:
- Հատուկ ուշադրություն դարձնել ներքին շուկայի պաշտպանության հարցերին, որի ուղղությամբ համապատասխան օրենսդրությունն առ այսօր չի կիրառվում՝ հանգեցնելով

առանձին շուկաների «դեֆորմացմանը» և հայրենական արտադրողների շահերի ստորադասմանը:

### ***Գյուղատնտեսական քաղաքականություն***

ՀՀ գյուղական համայնքների զարգացման տեսանկյունից առկա են ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ինստիտուցիոնալ, օրենսդրաիրավական, ենթակառուցվածքային և տարաբնույթ մի շարք այլ հիմնախնդիրներ:

Այս առումով, որպես ռազմավարական հիմնական նպատակ, մենք տեսնում ենք գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացումը, ոլորտում տնտեսավարման շուկայական մեխանիզմների և պետական աջակցության ժամանակակից մեթոդների լիարժեք արմատավորումը, ինչպես նաև գյուղի սոցիալական հիմնահարցերի լուծումը, որի համար անհրաժեշտ է՝

- մշակել և իրականացնել գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագիր, որի բաղկացուցիչ մասը պետք է կազմի ոլորտի պետական աջակցության ծրագիրը, կիրառելով ինչպես պետական գնումների, այնպես էլ դոտացիաների և վարկավորման մեխանիզմները, որոնք թույլ կտան նաև անուղղակիորեն կարգավորել գյուղմթերքների գները,
- աջակցել գյուղացիական տնտեսություններին վարկային ռեսուրսների մատչելիության և հասանելիության ապահովմանը նպաստելով հողագործության համար վարկային միջոցների մատչելիությանը,
- իրական գործողության մեջ դնել գյուղատնտեսության բնագավառում ապահովագրության մեխանիզմները և պետական երաշխիքներ տրամադրել առևտրային բանկերին՝ ֆորս-մաժորային իրավիճակներում վարկերի չվերադարձման դեպքում,
- խրախուսել գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացումը և գյուղմթերքների արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների միավորումների ձևավորման գործընթացները,
- պետական աջակցություն ցուցաբերել գյուղարտադրանք արտահանողներին, հնարավորինս կրճատել տարբեր տեսակի «միջնորդների» առկայությունը ոչ միայն ճյուղի արտադրանքի շրջանառության, այլև արտադրության գործընթացներում, ինչպես նաև ձևավորել գյուղմթերքների մեծածախ շուկաներ,
- հատուկ ուշադրություն դարձնել գյուղական համայնքների արտադրական, ինժեներական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը և զարգացմանը,
- համակարգված պայքար մղել գյուղմթերքների արտադրության և շրջանառության ոլորտներում ռեկետի, չինովնիկական ամենաթողության և մենաշնորհացման երևույթների դեմ, որի շնորհիվ կպաշտպանվեն ոչ միայն գյուղմթերք արտադրողների, այլև սպառողների կենսական շահերը:

### ***Բնապահպանության ոլորտ***

Շրջակա միջավայրի պահպանության և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման պետության պարտավորությունը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ: Բնապահպանության ոլորտում կառավարման սխալների հետևանքով շրջակա միջավայրի վերականգնումը դժվարին, երբեմն էլ նույնիսկ անհնարին գործընթաց է: Ելնելով վերոնշյալից, կարևոր է ընդգծել, որ բնապահպանության ոլորտում օրենսդրական կարգավորումները, իրավակիրառ մեխանիզմները, պետական կառավարումն ու ոլորտում գործող մասնավոր սեզմենտի գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը պետք է իրականացվի վիրաբուժական ճշգրտությամբ:

Այս ոլորտում անհրաժեշտ է՝

- բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրության և իրավակիրառ մեխանիզմների կատարելագործում,
- հանքարդյունաբերական, ՀԷԿ-երի և այլ ծրագրերի իրականացման առնչությամբ տեղական համայնքներում կազմակերպվող հանրային լուսմների ընթացքում քաղաքացիներին տեղեկատվական և իրավական աջակցության տրամադրում,
- հասարակության շրջանում էկոգիտակցության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում,
- նպաստել կանաչ գոտիների պահպանմանն ու ավելացմանը:

#### 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երկրում առկա ծանր սոցիալական վիճակը դրսևորվում է ճգնաժամային մակարդակի աղքատությամբ, գործազրկության մեծ ծավալներով, անընդմեջ ուժգնացող արտագաղթի տեմպերով և հասարակության մեջ հուսալքության առկայությամբ: Այս պայմաններում չափազանց կարևոր է երկրում առկա նյութական միջոցների խիստ տնտեսման ռեժիմի կիրառումը, տնտեսության վերականգնմանն ուղղված հակաճգնաժամային միջոցների ձեռնարկումը, աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ծրագրերի իրականացումն ու կոնկրետ հասցեագրված սոցիալական օժանդակության ապահովումը:

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության համոզմամբ, սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներ պետք է հանդիսանան բնակչության կենսամակարդակի հետևողական բարձրացումը, սոցիալական անհավասարության կրճատումը, սոցիալական հիմնական բարիքների և ծառայությունների համընդհանուր մատչելիության ապահովումը:

Անհրաժեշտ ենք համարում արմատական քայլեր ձեռնարկել այնպիսի լուրջ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, ինչպիսիք են՝

- 1) աղքատության բարձր մակարդակը և բնակչության դրամական եկամուտների խիստ բևեռացումը,
- 2) ծնելիության և կյանքի միջին տևողության անկմամբ պայմանավորված բնակչության ծերացումը և բնական աճի նվազումը, ինչպես նաև դրանց հետևանքով ստեղծված ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը,
- 3) սոցիալական աջակցության և օժանդակության հասցեականության ցածր աստիճանը:

Մենք հանդես ենք գալիս ցենտրիստական տիպի սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության ձևավորման օգտին, ինչը ենթադրում է Սահմանադրությամբ հռչակված սոցիալական պետության գաղափարի իրական կենսագործում և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սոցիալական պաշտպանվածության գործուն համակարգի ձևավորում:

Այս առումով հիմնական ուղղությունները պետք է հանդիսանան՝

- բնակչության դրամական եկամուտների աճի ապահովումը և դրանց բևեռացման նվազեցումը՝ աշխատավարձերի բարձրացման, համախառն ներքին արդյունքում աշխատավարձի բաժնի մեծացման, կենսաթոշակային ապահովության բարելավման և բնակչության սոցիալական աջակցության հասցեականության բարձրացման միջոցով,

- եկամտային և մարդկային աղքատության հաղթահարումը, քաղաքացիների սոցիալական անվտանգության ապահովումը,
- կարևորագույն սոցիալական բարիքների, առաջին հերթին՝ առողջապահության, սոցիալական սպասարկման և կրթության մատչելիության ապահովումը,
- փախստականների և բռնադատվածների հիմնախնդիրների լուծման պետական քաղաքականության կատարելագործումը և համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- մարդկային կապիտալում ներդրումների գերակայությունը, պետական այլ ծախսերի նկատմամբ սոցիալական զարգացմանն ուղղվող պետական ծախսերի առաջանցիկ աճի տեմպի ապահովումը,
- պետական աջակցության կարիք ունեցող և սոցիալական խնդիրներն ինքնուրույն լուծելու անընդունակ, սոցիալապես խոցելի խավերի արդյունավետ պաշտպանության իրականացումը,
- բնակչության սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքների կիրառումը,
- երկրի աշխատունակ բնակչության համար տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, որը հնարավորություն կտա քաղաքացիներին սեփական միջոցների հաշվին բարձրացնել իրենց կենսամակարդակը,
- բնակչության արդյունավետ զբաղվածության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ապահովումը, աշխատուժի մրցունակության բարձրացումը,
- գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը,
- բնակչության մահացության մակարդակի նվազեցման և ծնելիության ցուցանիշների բարելավման համար նախադրյալների ստեղծմամբ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը,
- սահմանամերձ գոտիների առաջանցիկ զարգացման միտումով տարաբնակեցման արդյունավետ սխեմաների մշակումը:

### ***Առողջապահության համակարգ***

Մեր կուսակցության դիտարկմամբ առողջապահության և բուժօգնության համակարգի զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու առաջնային խնդիրներն են՝

- «Առողջապահության զարգացման ռազմավարական ծրագրի» մշակումն ու իրականացումը,
- անվճար բուժժառայությունների որակական բարելավումը, բնակչությանը մատուցվող անվճար բուժժառայությունների մատուցման նպատակով պետական երաշխիքների ծավալի և պետության ֆինանսական հնարավորությունների ավելացումը, ոլորտում ստվերային շրջանառության ծավալների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը,
- առողջապահության համակարգի կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործումը, բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և դրա փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն և այլն) կիրառումը,
- բնակչությանը մատչելի և որակյալ բժշկական օգնության տրամադրումը, մոր և մանկան առողջության պահպանությունը,
- հաշմանդամների հիմնահարցերի լուծման ուղղությամբ պետական հատուկ քաղաքականության իրականացումը, որը հաշմանդամների համար կստեղծի կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու պայմաններ և կապահովի

նրանց իրավունքների իրականացումը և հաշմանդամների սոցիալական պաշտպանության համալիր ծրագրի ընդունումը,

- բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց իրական անվճար ու հասանելի բժշկական օգնության ցուցաբերումը,
- գյուղական համայնքներում առաջնային բուժօգնության համակարգի դերի ամրապնդումն ու դրա գործունեության բարելավումը,
- դեղորայքի մատչելիության և անվտանգության մակարդակների բարձրացումը:

### ***Զբաղվածություն և գործազրկություն***

Պետությունը որպես կարևոր և առաջնային պարտավորություն պետք է ճանաչի զբաղվածության հնարավորինս բարձր և կայուն մակարդակի, ինչպես նաև աշխատանքի ազատ ընտրության միջոցով վաստակելու և բարեկեցիկ ապրելու մարդկանց իրավունքի պաշտպանության ապահովումը: Աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման ոլորտում առանձնահատուկ է աշխատանքի վարձատրության հարցը, որի ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը պետք է միտված լինի օրենքով սահմանվող կենսապահովման նվազագույն զամբյուղի արժեքին նվազագույն աշխատավարձի համապատասխանեցմանը և դրանց պարբերական վերանայման միջոցով աշխատողների կենսապայմանների շարունակական բարելավմանը: Այս տեսանկյունից, Կուսակցությունն առաջնահերթ լուծման ենթակա խնդիրներ է համարում՝

- գնաճի տեմպերին համամասնորեն նվազագույն աշխատավարձի բարձրացումը,
- աշխատավարձերի սահմանման հիմքերի կատարելագործումը, որոնք պետք է հաշվի առնեն նաև կատարվող աշխատանքների որակը, ժամկետը, բարդությունը, քանակը և աշխատողների որակավորումը,
- զբաղվածության ծրագրերի իրականացման նպատակով բյուջետային ծախսերի ավելացումը:

Կուսակցության համոզմամբ, աշխատանքի շուկայում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է լինեն՝

- զբաղվածության ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց արդյունավետության գնահատման ընթացակարգերի ներդրումը,
- գործազրկության նպաստների չափի էական բարձրացումը և այդ նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգերի կատարելագործումը,
- կանանց, երիտասարդներին և հաշմանդամներին մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման հարցում աջակցությունը,
- փոքր և միջին բիզնեսի ոլորտում ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման նպատակով վարկավորման ծավալների ընդլայնումը,
- սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիներին աշխատանքի տեղավորման ուղղությամբ հասցեական աջակցության ցուցաբերումը:

### ***Սոցիալական պաշտպանություն***

Հայաստանում լուրջ խնդիր է ոչ միայն անապահով խավերի սոցիալական պաշտպանության, այլև զբաղվածների գերակշիռ մասի աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- 1) բնակչության սոցիալական պաշտպանության հայեցակարգի մշակումը,

- 2) աղքատության նվազեցումը և աղքատության բացասական հետևանքների մեղմումը, սոցիալական անհավասարության նվազեցումը և սոցիալական հնարավոր լարվածության կանխարգելումը,
- 3) հասցեականության սկզբունքի հիման վրա սոցիալական նպաստների և աջակցության այլ ձևերի արդյունավետության բարձրացումը,
- 4) հասարակության սոցիալական բնեռացման մակարդակի նվազեցումը և բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացումը,
- 5) կենսաթոշակառուների, հաշմանդամների, տարեցների, երեխաների և սոցիալական օգնության կարիք ունեցող բնակչության այլ խավերի համար պետական նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը,
- 6) կենսաթոշակների, կրթաթոշակների, նպաստների, աշխատանքի վարձատրության մակարդակների աճը, ինչպես նաև դրանցով պայմանավորված՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ պետական ծրագրերի իրականացումը,
- 7) սեփականության իրավունքի նորմերի (ժառանգություն, նվիրատվություն և այլն) ապահովմամբ նախկին ԽՍՀՄ Խնայբանկում բնակչության ավանդադրած խնայողական ավանդների համարժեք ինդեքսավորման չափանիշների և վերադարձման մեխանիզմների մշակումն ու ներդրումը,
- 8) ուժեղացնել հսկողությունը աշխատանքային օրենսդրության պահանջների (աշխատօր, արձակուրդ, հանգիստ, վարձատրություն) պահպանման ուղղությամբ և աշխատավորության սոցիալական պաշտպանվածության հարցերի կարգավորման նպատակով նպաստել արհմիությունների անկախ գործունեությանը,
- 9) առողջապահական ապահովագրության ներդրում խոշոր և միջին ձեռնարկությունների աշխատողների նկատմամբ:

### ***Կենսաթոշակային քաղաքականություն***

Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգում գոյություն ունեցող լուրջ հիմնախնդիր է կենսաթոշակների ցածր մակարդակը: Այս առումով, անհրաժեշտ է սերտ կապ ապահովել կենսաթոշակի չափի և թոշակառուի նախկին աշխատավարձի ու սոցիալական վճարումների միջև, որի համար առաջիկա տարիներին անհրաժեշտ է ձեռնամուխ լինել կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացմանը՝ հետապնդելով կենսաթոշակային ապահովության մակարդակի բարձրացման և այս համակարգում գյուղատնտեսությամբ զբաղվողների ու ինքնազբաղվածների ընդգրկման նպատակ:

Անհրաժեշտ է կենսաթոշակային ապահովության այնպիսի համակարգի ստեղծումը, որը հիմնված կլինի հետևյալ սկզբունքների և մոտեցումների վրա.

- կենսաթոշակների շարունակական բարձրացում՝ հաշվի առնելով նաև սղաճի մակարդակը,
- կենսաապահովման նվազագույն զամբյուղից ոչ ցածր կենսաթոշակ ստանալու քաղաքացիների իրավունքի ապահովում,
- պետական կենսաթոշակների նշանակմանը զուգահեռ ոչ պետական (կամավոր) կենսաթոշակային համակարգի ձևավորում, ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների ձևավորման և զարգացման հարցում պետական աջակցության ցուցաբերում,
- կենսաթոշակների ձևավորման ապահովագրական, կուտակային և սոցիալական բաղադրիչների համատեղում,
- մեկ հարկատեսակում եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների միավորում,

- տարիքային կենսաթոշակների տարբերակման աստիճանի մեծացում՝ կախված կենսաթոշակառուի եկամուտներից կատարված վճարների մեծությունից և աշխատանքային ստաժից,
- կենսաթոշակային ապահովության տարբեր սխեմաների ընտրության հնարավորությունների տրամադրում,
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հավաքման մեխանիզմների հստակեցում, կատարելագործում և այս բնագավառում վարչարարության արդյունավետության բարձրացում,
- մենք դեմ ենք արտահայտվում Հայաստանում ներդրված պարտադիր կենսաթոշակային համակարգին, քանի որ այն անարդյունավետ է, չի համապատասխանում քաղաքացիների այսօրվա պահանջներին, ինչպես նաև չի կարող ապահովել հոչակված դրույթների իրագործումը ապագայում:

***Բնակարանային ապահովության ոլորտում ակտիվ քաղաքականություն***

Բնակարանային ապահովության ոլորտում պետական քաղաքականության ռազմավարական նպատակը յուրաքանչյուր քաղաքացու համար անհրաժեշտ բնակարանային պայմանների ապահովման նպատակով համապատասխան հնարավորությունների ստեղծումն է, որի համար Կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

- զարգացնել բնակարանային շինարարության երկարաժամկետ ֆինանսավորման և հիպոտեկային վարկավորման ձևերը և ներդնել դրանց իրականացման մեխանիզմները,
- շարունակել անավարտ բնակարանային շինարարության առկա օբյեկտների շինարարությունը և բնակարանային սերտիֆիկատների միջոցով կարիքավորներին դրանք հատկացնելու գործընթացը,
- բնակչության առանձին կատեգորիաների (երիտասարդ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամներ և այլն), ինչպես նաև առանձին տարածաշրջանների (սահմանամերձ գոտիների, նախալեռնային ու լեռնային գոտիների բնակավայրերի) համար բնակելի տների կառուցման նպատակով արտոնյալ պայմաններով հողահատկացման և վարկավորման մեխանիզմների մշակումը և ներդրումը,
- հիպոտեկային վարկերի տրամադրման իրական մատչելիության ապահովումը:

***Ընտանիքի, մայրության, երեխաների պաշտպանություն և երիտասարդական քաղաքականություն***

Կուսակցությունն առանձնակի կարևորում է ընտանիքի, մայրության, երեխաների պաշտպանությունը, ինչպես նաև երիտասարդության հարցերին վերաբերվող մի շարք խնդիրների լուծումը՝

- նորաստեղծ ընտանիքներին բազմակողմանի աջակցության ցուցաբերումը,
- ընտանիքում առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի ծնվելու դեպքում՝ միանվագ դրամական նպաստի կամ այլ օժանդակության տրամադրումը, ծնելիությունը խթանող այլ ծրագրերի իրականացումը,
- պետական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով սովորող երիտասարդ ընտանիքի անդամների ուսման վարձի դիմաց օրենքով սահմանված չափով և կարգով աջակցության ցուցաբերումը,
- երիտասարդության զբաղվածության ոլորտում երաշխիքների ապահովումը, պետական համարժեք կադրային քաղաքականության իրականացումը,
- երիտասարդ ընտանիքների պետական օժանդակությունը,
- երիտասարդներին երաշխավորված սոցիալական ծառայությունների մատուցումը,

- արտակարգ ընդունակություններ դրսևորած երիտասարդների պետական աջակցությունը,
- երիտասարդների հոգևոր և ֆիզիկական զարգացման, նրանց քաղաքական և հայրենասիրական դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
- երիտասարդական կազմակերպությունների գործունեության պետական աջակցությունը:

## 5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### *Կրթություն*

Կրթական համակարգի վերակենդանացումը մեր երկրի առաջ կանգնած ամենակարևոր խնդիրներից մեկն է: Չափազանց կարևոր է կրթական համակարգում հասնել այնպիսի վիճակի, որ յուրաքանչյուր քաղաքացի ստանա արդիական, որակյալ և իրական պահանջարկ վայելող տնտեսական և գործնական այնպիսի գիտելիքներ, որոնք հնարավորություն կտան քաղաքացուն արժանի տեղ զբաղեցնել հասարակության մեջ և կապահովեն աշխատատեղով: Ռազմավարական նշանակություն ունեցող այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է՝

- բարձր որակավորում ունեցող, հայրենասեր, բազմակողմանի զարգացած և բարոյական արժեքներ դավանող սերունդ ունենալու գերխնդրի լուծումն ապահովող կրթական համակարգի ստեղծումը,
- մանկավարժների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի վարձատրության մակարդակի կտրուկ և շարունակական բարձրացումը,
- կրթության որակի էական բարելավումը, անվճար դասագրքերով ապահովման սկզբունքին անցումը, կրթության ոլորտի օրենսդրության կատարելագործումը, ինչպես նաև անապահով ուսանողներին, որք և ծնողագուրկ երեխաներին սոցիալական հասցեական աջակցության ցուցաբերումը՝ ներառյալ ուսման վարձերի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը,
- կրթության կառավարման գործընթացին հասարակության մասնակցության և համալսարանական ինքնավարության իրական ապահովումը,
- կրթաթոշակների շարունակական բարձրացումը,
- կրթության բովանդակության նորացումը, համակարգչային գիտելիքների և օտար լեզուների իմացության խթանումը,
- պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների իրավահավասարության, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների իրական ապահովումը,
- գործնական գիտելիքներ և հմտություններ ապահովող արդյունավետ ուսումնական նոր ծրագրերի իրագործումը,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համակարգի վերականգնումը

### *Գիտություն*

«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության առաջնահերթ խնդիրներից մեկը գիտության և գիտատեխնիկական առաջընթացի համար համապատասխան պայմանների ապահովումն ու ենթակառուցվածքների զարգացումն է: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել գիտության զարգացման համալիր ծրագիր, որով կնախատեսվի հետևյալ կարևոր խնդիրների լուծումը.

- գիտության արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում,



- գիտության ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործում և դրանց արդյունավետության բարձրացում,
- պետական գիտատեխնիկական քաղաքականության առաջնահերթությունների և գիտության զարգացման գերակա ուղղությունների հստակ սահմանում,
- բարձր որակավորում ունեցող գիտական կադրերի պատրաստման մեխանիզմների ներդրում,
- գիտության ոլորտի տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածության մակարդակի կտրուկ և անընդմեջ բարձրացում,
- ինովացիոն (նորարարական) ակտիվ քաղաքականության իրականացում, ենթակառուցվածքների արդիականացում,
- գիտության զարգացման միջազգային ու տարածաշրջանային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին ակտիվ մասնակցության ապահովում,
- տաղանդավոր երիտասարդ գիտնականների պետական աջակցության ապահովում:

### ***Մշակութային և հոգևոր զարգացում***

Կուսակցությունը չափազանց էական է համարում հասարակության հոգևոր և մշակութային զարգացմանն ուղղված ծրագրերի իրագործումը: Այս համատեքստում կարևորում ենք՝

- բնակչության հոգևոր, մշակութային, կրթական ու բարոյական դաստիարակության բնագավառում պետական ծրագրային քաղաքականության իրականացումը,
- հոգևոր-մշակութային ժառանգության, ազգային ավանդույթների, համամարդկային արժեքների և նորմերի պահպանման, ինչպես նաև մշակութային կազմակերպությունների գործունեության և ստեղծագործ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանումը, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ այլ պետությունների տարածքներում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանությունը, ինչպես նաև հայ կրթական ու մշակութային կյանքի զարգացմանն աջակցությունը,
- պետական ծրագրերի իրականացմամբ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ազգային, մշակութային և մյուս իրավունքների պաշտպանությունը, նրանց մայրենի լեզվի, կրոնի և մշակույթի պահպանմանն ու հետագա զարգացմանն աջակցությունը,
- պատմության և մշակույթի հուշարձանների, թանգարանային ու գրադարանային ֆոնդի պահպանության ծրագրերի իրականացումն ու դրանց վերաբերյալ ժամանակակից տեղեկատվական բազայի ստեղծումը,
- թանգարանային համակարգի բարեփոխումը, դրա դաստիարակչական ու կրթական գործառույթի ուժեղացումը, գործող պետական թանգարանների մասնավորեցման արգելումը, ստեղծվող թանգարանների և ցուցասրահների գործունեությանն աջակցությունը, թանգարանների տեխնիկական հագեցումը, թանգարանային ֆոնդերի համալրման համար անհրաժեշտ միջոցների հատկացումը, մարզերում թատրոնների, թանգարանների, արվեստների, ազգային արհեստների և ստեղծագործական ինքնագործունեության մյուս ձևերի վերածնունդը,
- հայրենական կերպարվեստի, ճարտարապետության, թատրոնի և կինեմատոգրաֆիայի զարգացումը, մասնագիտական ստեղծագործական գործունեության աջակցությունը և խրախուսումը, գրադարանների տեխնիկական ու տեղեկատվական բարեփոխումը:

Հայ ժողովրդի հոգևոր կյանքում և ազգային մշակույթի զարգացման ու ազգային ինքնության պահպանման գործում բացառիկ դեր ունեցող Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և պետության փոխհարաբերությունները պետք է կարգավորվեն օրենքով: Պետք է լինի Հայաստանի

Հանրապետության ամբողջ տարածքում քրիստոնեական արժեքները և ուսմունքն ազատորեն քարոզելու, ինչպես նաև վտանգավոր և ծայրահեղական աղանդների դեմ հակաքարոզչություն իրականացնելու, դպրոցներում եկեղեցու պատմության և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրոնագիտական առարկաների դասավանդմանն աջակցելու լիարժեք հնարավորություն:

Պաշտպանելով խղճի ազատությունը, պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի վերահսկելու քաղաքացիների կյանքին, առողջությանը և արժանապատվությանը սպառնացող, Հայաստանի Հանրապետության ազգային շահերի տեսանկյունից վտանգավոր գործունեություն ծավալող օտարերկրյա կրոնական և այլ կազմակերպությունների գործողությունների, կրոնական ծայրահեղականության գործունեությունը:

### ***Ֆիզիկական կուլտուրա և սպորտ***

Կուսակցության կարծիքով, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել բնակչության ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, մարզադպրոցների ցանցի ընդլայնմանը, մարզական ակումբների ստեղծմանը և ազգային մարզաձևերի վերականգնմանը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հիմնական խնդիր պետք է հանդիսանա ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու քաղաքացիների հնարավորությունների ընդլայնումը, առողջ ապրելակերպի քարոզչությունը, օլիմպիական շարժման խրախուսումը: Այս խնդիրների լուծումը մենք տեսնում ենք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական ծրագրերի մշակման և իրականացման, մասնագետների որակավորման բարձրացման և մասնագիտական պատրաստման ու վերապատրաստման մակարդակի բարելավման, ինչպես նաև բյուջետային և այլ միջոցների հաշվին ոլորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման մեջ:

Չափազանց անհրաժեշտ են առողջ ապրելակերպը խրախուսող ծրագրերը, ինչպես նաև կարևոր է այդ ուղղությամբ լայնածավալ քարոզչության իրականացումն ու սիրողական սպորտով զբաղվողների համար մատչելի հնարավորությունների ու հարթակների տրամադրումը:

## **6. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

«Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության կարծիքով, Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտի հիմնական խնդիրներն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովումը, արտաքին և ներքին սպառնալիքների կանխարգելման և վերացման ուղղությամբ ծրագրային և օպերատիվ միջոցառումների իրականացումը, տարածաշրջանային անվտանգության այնպիսի համակարգի ձևավորումը, որտեղ Հայաստանը կունենա լուրջ դերակատարություն և առավելագույնս ապահովված կլինի նրա անվտանգությունը,
- 2) երկրի պաշտպանության ամրապնդումը, ազգային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսումը, բացահայտումը, կանխարգելումը, հակազդումը և չեզոքացումը,
- 3) այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության բարիդրացիական, հավասարակշռված, իրավահավասար և փոխշահավետ համագործակցությունը,

- 4) երկրի տնտեսության զարգացումը և սոցիալական ուղղվածություն ունեցող տնտեսական քաղաքականության իրականացումը, տնտեսական շահերի պաշտպանությունը, գիտատեխնիկական և տեխնոլոգիական կախվածության նվազեցումը, ժողովրդագրական գործընթացների կարգավորումը, երկրի բնապահպանական ու բնօգտագործման վիճակի բարելավումը,
- 5) Հայաստանի Հանրապետության տարածքում մարդու և քաղաքացու անվտանգության, նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովումը, պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործումը, օրինականության ու կարգուկանոնի ամրապնդումը և հասարակության սոցիալ-տնտեսական կայունության ապահովումը, քաղաքացիների, պաշտոնատար անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կուսակցությունների, հասարակական միավորումների, կրոնական և այլ կազմակերպությունների կողմից օրենսդրության պահանջների անվերապահ կատարումը:

### ***Ռազմապաշտպանական համակարգ***

«Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության հետագա բարձրացումը, հզորացումը և արդիականացումը դիտարկում է բանակաշինության բնագավառում հայեցակարգային հենքի վրա իրականացվելիք բարեփոխումների և Հայաստանի Հանրապետության շահերից բխող միջազգային ռազմական ինտեգրացիայի համատեքստում: Մենք առաջնային կարևորություն ենք տալիս Հայաստանի «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանն» անդամակցությունը, ինչը, սակայն, չպետք է բացառի անվտանգության այլընտրանքային երաշխիքների համատեքստում այլ միջազգային միավորումների հետ համագործակցությունը:

Ժամանակակից, արհեստավարժ բանակի ստեղծումը պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից է:

Արտաքին մարտահրավերներին դիմակայելու, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և ռազմականացված այլ միավորումների տեխնիկական հագեցվածությունը շարունակական կատարելագործելու, ինչպես նաև բանակի մարտունակությունն անշեղորեն բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է իրագործել ռազմական բարեփոխումների ծրագիր, որով, մասնավորապես, կապահովվի ապագայում դեպի արհեստավարժ բանակ սահուն անցում կատարելու հնարավորությունը՝ միաժամանակ նախատեսելով պարտադիր զինվորական ծառայության ժամկետների աստիճանական կրճատում (պայմանով, որ այն չվտանգի բանակի համալրման խնդիրը):

Իրականացվելիք բարեփոխումների շրջանակներում պետք է էապես բարձրացնել զինծառայողների դրամական բավարարման մակարդակը, ինչպես նաև հատուկ ծրագրերի իրականացման միջոցով բարելավել նրանց սոցիալական պաշտպանվածության և բնակարանային պայմանները:

Անհրաժեշտ ենք համարում նաև համակարգված և ծրագրավորված աշխատանքներ կատարել զինված ուժերի մարտունակության հետագա աճի, զինծառայողների հայրենասիրական ոգին առավելագույնս բարձրացնելու, բանակում կարգապահության և բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման ուղղությամբ, ինչպես նաև պայքարել զինված ուժերում գոյություն ունեցող բացասական երևույթների՝ զինծառայողների իրավունքների և արժանապատվության ոտնահարման դեմ:

Պետությունը պետք է մշտապես արժանի վերաբերմունք և ուշադրություն ցուցաբերի Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի մասնակիցների նկատմամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել և ընդունել «Ռազմական գործողությունների մասնակիցների կարգավիճակի

մասին» ՀՀ օրենքը, որը կերաշխավորի ռազմական գործողություններին մասնակցած անձանց, այդ թվում՝ ազատամարտիկների և նրանց ընտանիքների անդամների արտոնությունները, թոշակները և այլ վճարումները, բնակարանային պայմանները և սոցիալական ապահովության մյուս երաշխիքները:

## **7. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Արտաքին քաղաքականության ոլորտում ազգային շահերը Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ապահովման, բոլոր պետությունների, միջազգային կազմակերպությունների և միությունների հետ համահավասար և փոխշահավետ հարաբերությունների զարգացման, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, Մփյուռքի համախմբման, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեջ են:

Որպես արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներ Կուսակցությունը դիտարկում է՝

- միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր երկրների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների զարգացումը, այդ հիմքի վրա արտաքին քաղաքականության կառուցումը, դիվանագիտական ծառայության կադրերի պատրաստման և վերապատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը,
- Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, արտաքին քաղաքական ակտիվ կուրսի իրականացումը, երկրի տնտեսական և սոցիալական կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովումը, էներգետիկ անվտանգության ապահովմանն ուղղված պայմանների ստեղծումը, համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական և քաղաքական կառույցներին ինտեգրումը,
- ահաբեկչության և այլ հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում այլ պետությունների և միջազգային կառույցների հետ համագործակցությունը:

### ***Արտաքին քաղաքականության առաջնահերթությունները***

#### **1. Ղարաբաղյան հիմնախնդիր**

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման ապահովմամբ, Արցախի և Ադրբեջանի կողմից փոխզիջումների հիման վրա, անվտանգության միջազգային երաշխիքների ամրագրմամբ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ, քաղաքական ճանապարհով կարգավորումը ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն է:

Անհրաժեշտ է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բազմակողմ բանակցություններին գուրընթաց համակողմանիորեն աջակցել Արցախի անվտանգության ապահովմանը, ժողովրդավարացմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային ինտեգրմանը:

Մեզ համար ընդունելի է Ղարաբաղյան հիմնախնդրի այնպիսի կարգավորումը, որի բանակցային գործընթացում ԼՂՀ-ն հանդես կգա որպես լիիրավ կողմ և ցանկացած լուծում տեղի կունենա ԼՂՀ ժողովրդի որոշման շրջանակներում: Մեր համոզմամբ ԼՂՀ անկախությունն այլընտրանք չունի:

#### **2. Հայաստան-Մփյուռք հարաբերություններ**

- Սփյուռքահայության հետ հարաբերությունները, մասնավորապես՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համակարգված զարգացումը և հետագա խորացումը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան սփյուռքահայերի օրինական իրավունքների ու շահերի պաշտպանությունը ևս Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայություններից է:
- Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում Հայաստանի առաջատար դերի հրամայականից ելնելով Սփյուռքի կուտակած քաղաքական, մտավոր, նյութական ներուժը, ներդրումային և մասնագիտական հնարավորություններն առավելագույնս ծառայեցնել Հայաստանի Հանրապետության և Արցախի զարգացման, Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային տնտեսությանն ինտեգրելու ծրագրերի իրականացման, համազգային հիմնախնդիրների լուծման, Մայր հայրենիքի շուրջ սփյուռքահայության համախմբման, հոգևոր-մշակութային արժեքների պահպանման համար: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը պետք է գործնական քայլեր կատարի սփյուռքահայ լոբբիստական կազմակերպությունների հետ կապերը սերտացնելու, Սփյուռքի ազգային կյանքը աշխուժացնելու, Հայրենիքի քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական, հոգևոր-մշակութային, մարզական և հասարակական կյանքին սփյուռքահայության լիարժեք մասնակցության համար հնարավորություններ ստեղծելու, սփյուռքի կրթամշակութային, հոգևոր, մարզական և այլ բնույթի ձեռնարկները ծրագրավորված ձևով իրականացնելու, հայկական գաղթօջախների կրթական, մշակութային, հոգևոր և մարզական կառույցներում հայաստանցի մասնագետների գործունեությունը խրախուսելու, Սփյուռքում հայոց լեզվի պահպանման, Հայ ժողովրդի պատմության ուսուցման, կրթամշակութային հաստատություններին անհրաժեշտ դասագրքերով և մեթոդական ձեռնարկներով ապահովելու, հայոց լեզվի և Հայ ժողովրդի պատմության սփյուռքահայ ուսուցիչների և մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացն իրականացնելու ուղղությամբ:

### **3. Արտաքին քաղաքականության այլ կարևոր ուղղություններ**

- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում Հայաստանի Հանրապետության ազգային ու պետական շահերից բխող մասնակցություն և գործունե ազդեցություն: Մեր համոզմամբ Հայոց ցեղասպանության դատապարտումն ու միջազգային ճանաչումը այլընտրանք չունի, և միմիայն այդ դեպքում վերջնականապես կիրագործվի պատմական արդարության պահանջը:
- Հայաստանի անմիջական հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում, տարածաշրջանում կայուն և երկարատև խաղաղության հաստատում, միջազգային և տարածաշրջանային ծրագրերի իրականացման գործընթացում Հայաստանի ընդգրկում:
- Կարևորագույն նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Անկախ Պետությունների Համագործակցությանը: ԱՊՀ ձևաչափում անդամ պետությունների հետ պատմականորեն ձևավորված հանգամանքների և համադրելի ու ընդհանուր հոգևոր-մշակութային արժեքների, ինչպես նաև տարբեր ուղղություններով համագործակցության շրջանակներում հարաբերությունների բազմակողմանի զարգացում:
- ՄԱԿ-ի, ԵՄ-ի, Եվրամիության և միջազգային այլ կազմակերպությունների և կառույցների հետ Հայաստանի Հանրապետության արդյունավետ համագործակցություն:

- ՀՀ զարգացմանը, անվտանգության ապահովմանը և բարգավաճմանն աջակցող երկրների և միջազգային կառույցների հետ ռազմավարական ծրագրերի իրականացում:
- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային համագործակցության ամրապնդում և զարգացում: Տարածաշրջանային անվտանգության հարցում ռազմավարական գործընկերության խորացում: Ավանդական բարեկամության և հոգևոր-մշակութային կապերի ամրապնդում:
- ԱՄՆ-ի հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հետագա խորացում և քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական և այլ բնագավառներում համագործակցության մակարդակի էական բարձրացում:
- Քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տարածաշրջանային անվտանգության, հաղորդակցության ոլորիների, հոգևոր-մշակութային, հումանիտար և այլ բնագավառներում ավանդական, բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների զարգացում Վրաստանի հետ:

## ԱՌԱՋ ԴԵՊԻ ԱՊԱԳԱ